

ուած ձեւով հազցնելու է այլեւս իսկ եթէ հիւանդը դժուարութեամբ կը շարժի, տակաւին մէկ կողմ պառկած ժամանակ, առիթէն կարելի է օգտուիլ փոխելու համար սաւանը, եթէ պէտք կայ:

կոնսակի խնամք.— Շատ կարեւոր է օրական առնուազն երկու անգամ հիւանդի մը կոնսակի վարի մասն ու նստատեղին մաքրելը, շփելն ու չորցնելը, արևան շրջանը դիւրացնելու և արգիլելու համար վերքերու երեւումք, որոնք շատ շուտով կը կազմուին շարունակ կոնսակի վրայ պառկած հիւանդներուն յետոյքին վրայ:

Ակուաներու խնամք.— Եթէ հիւանդը չի կրնար իր ակուաները խոզանակել, պղպակի բամպակի կաոր մը կը փաթթեն փայտի մը հիւզին վրայ, և զայն կը թաթիսեն ատամնաջուրով կամ թէ թթուածնեալ ջուրով (բայ օչցցոնց) խասն ջուրի մը մ'չ, և ակուաներն ու լինզերը կը շփեն անով, վերէն վար՝ եթէ վերի ծնօտն է, և վարէն վեր՝ եթէ վարի ծնօտն է, բայց յաճախ փոխելով բամպակը: Բերնի արդուզարդը շատ կարեւոր է, վասնդի կերակուրին մնացորդ մասը հոն կենալով կը խմորի, ակուաներուն վրայ կ'աղդէ և շունչը կը հոտեցնէ:

Մազերու խնամք.— Կնկան մը մազերը օրական երկու անգամ պէտք է խոզանակել և լաւ սանարել:

Հաւաքց՝ Կ. Յ. ԲՈՍՄԱԶԵԱՆ



ԵՐԿՈՒԵՔ . . . ԱՌԱԿՆՅ ՑԱԼԻ ԵՒ ՄՆՆԴԱԲԵՐՈՒԹԻՒՆ . . . ՀՍՏ ԿԱՄՄ.— Աստուածաշունչին մէջ գրուած է. «Ձաւսվ պիտի ծնիս»: Սակայն բժշկութիւնը կը խորի կիները ազատել աստուածային այդ պատիժն: Գէ՞ որ, այսօր, կան մարդիկ, ազատուած՝ ուրիշ պատիժէ մը. «Հացդ պիտի շահիս ճակտիդ բրախնքով»: Հարուսաները ծեզ օրինակ:

Հինէն ի վեր բժիշկները կ'աշխատէին գտնել այնպիսի միջոց մը, որ յդի կիները, ծննդաբերութեան ատեն, ազատէր ցաւերէն եւ տառապանքէն:

Փրոֆ. Տէլմաս, ծննդաբերութեան իաւանական օրէն առաջ եւ դեռ ցաւերը չկսած, թմբեցուցիչ դեղ մը կը ներարկէ ողնաշարին մէջ: Մարմնին վարի կէսը կը թմբի և փրոֆիէսօքը 20 վայրկեանի մէջ կ'ընէ այս բոլոր գործողութիւնները, զորս բնութիւնը քանի մը ժամ եւ երբեմն քանի մը օրէն կը կատարէ, այսինքն 20 վայրկեանի

մէջ կը բանայ արգանդը եւ ուղղակի տղան կ'առնէ առանց ժամերով սպասելու անոր աշխարհ գալու քմահաճոյքին:

Առայժմ այս մէթոտը մասնաւոր պարագաներու մէջ կը գործածուի եւ խոր մասնագիտութիւն կը պահանջէ:

**ԱՆՓԱՌՔ ՀԵՐՈՍՆԵՐ.**— Մայիս ամսուն Ափրիկէի մէջ մեռաւ քժշկական եւ գիտական աշխարհին մէջ հոչակաւոր մանրէաբան զափոնցի քթ. Նոկուց ի, վարակուելով դեղին տենդէ, հասարակածային ահաւոր հիւանդութիւն մը, որու մասին փորձեր ու պրատումներ կը կատարէր: Այսպէսով հատ. մը եւս կ'աւելնայ անփառք հերոսներուն՝ գիտուն-քժիշերու երկար շարքին վրայ, որոնք գիտակցաբար իրենց կեանքը զոհեցին եւ կը զոհեն, մարդկային անսահման ցաւը նուազեցնելու համար:

**ԱՇԽԱՐՀԻ ԾՆՈՒՆԴՆԵՐՆ ՈՒ ՄԱՀԵՐԸ.**— 19րդ դարու սկիզբէն ի վեր բնակչութեան աճում մը արծանագրած են աշխարհագիրները: Այս աճումը տեւած է մինչեւ 1914: 1800 թուականներուն, աշխարհի բնակչութեան թիւն էր 850 միլիոն, այսօր կը հասնի 1,700 միլիոնի:

Միայն եւրոպայի բնակչութիւնը 188 միլիոնէն հասած է 447 միլիոնի: Ծնունդներու համեմատութիւնը 30 առ հազար էր եւ դեռ առաւել կամ նուազ չափով մը կը պահեն այդ համեմատութիւնը հետեւեալ երկիրները,— Եգիպտոս՝ 42. 8 առ հազար, Սալվատոր՝ 37. 6, Պուլկարիա՝ 36. 7, Հնդկաստան՝ 34. 5, Ճափոն՝ 33. 8, Ռումանիա՝ 33, Սպանիա՝ 29. 3, Լիթուանիա՝ 28. 9, Հունգարիա՝ 28. 3, Իտալիա՝ 27. 5: Իսկ այդ համեմատութիւնը 20 առ հազարէն ալ վար իշած է հետեւեալ երկիրներու մէջ,— Շուէտ' 17. 5 առ հազար, Էստոնիա՝ 18. 2, Անգլիա՝ 18. 3, Զուիցերիա՝ 18. 4, Ֆրանսա՝ 19. 3, Պելնիքա՝ 19. 7, Գերմանիա՝ 19. 5, Նորվեգիա՝ 20. 0:

Մահերու համեմատութիւնն է, հաշուելով առ հազար, Ֆրանսա՝ 17. 7, Նոր Զելանտուա՝ 8. 3, Աւստրալիա՝ 9. 2, Հոլանտա՝ 9. 6, Քանատուա՝ 9. 7, Տանըմարքա՝ 10. 9, Ուրուկուէյ՝ 11. 5, Միացեալ-Նահանգները՝ 11. 8, Շուէտ' 11. 7, Գերմանիա՝ 11. 9, Զուիցերիա եւ Անգլիա՝ 12. 2, Պելնիքա՝ 13. 1, Իտալիա՝ 16. 6: Գալով Հնդկաստանի, Մահերու համեմատութիւնը (միշտ առ հազար), կը բարձրանայ մինչեւ 28. 5, Եգիպտոս՝ 26, Ճափոն՝ 21. 2, Պուլկարիա՝ 20. 8, Ռումանիա՝ 19. 6, Սպանիա՝ 19. 4, բայց Հնդկաստանի եւ բոլոր միւս երկիրներու ծննդեան համեմատութիւններն ալ բարձր են:

**ՀՅԱ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԱՃՈՒՄԸ.**— Հայաստանի ժողովուրդը 1920էն ի վեր կ'անի, կոտրելով աճումի համաշխարհային մրցանիշը: 1923ին, Հայաստանի աճման համեմատութիւնն էր 25. 2 առ հազար, 1924ին՝ 28 առ հազար, 1925ին՝ 31. 7 առ հազար: Այս համեմատութիւնը Անդրկովկասի մէջ անմրցելի կը նկատուի, որովհետեւ Վրաստան կ'անի տարին 9 առ հազար համեմատութեամբ, Ադրբէջան՝ 7 առ հազար համեմատութեամբ: Միւս կողմէ, Հայաստանի մահերը նուազած են: